

0811.08.5 «Անասնաբուծություն» մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0811.08.01.5 «Անասնաբուծ»
I. Դերը	Զբաղվում է գյուղատնտեսական կենդանիների խնամքի, պահվածքի կերակրման, բուժման մասնագիտական գործունեությամբ, անասնապահական մթերքների արտադրությամբ, դրանց նախնական մշակումն ապահովելու և կազմակերպելու մասնագիտական գործունեությամբ:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Անասնաբուծական արտադրության կազմակերպում և կառավարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • կազմակերպել անասնաբուծական արտադրանքի արտադրությունը և ստացված մթերքի նախնական մշակումն ու պահպանումը, • հսկել անասնաբուծական արտադրանքի պահպանման ընթացքն ու որակը, • նախապատրաստել արտադրանքի փոխադրումը, • պլանավորել արտադրանքի արտադրման հիմնական ցուցանիշներն ու մատուցել մասնագիտական գործունեության ոլորտում ծառայություններ, • կազմակերպել աշխատակիցների աշխատանքը, կազմել աշխատանքային գրաֆիկներ, • հսկել աշխատակիցների աշխատանքը, հարթեցնել աշխատանքային վեճերը, • մշակել ու անցկացնել կաթնատվության, քաշի և կենդանական ծագման այլ մթերքների ավելացման ուղղությամբ միջոցառումներ:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) անասնաբուծական արտադրանքի արտադրությունը կազմակերպված է, 2) անասնաբուծական արտադրանքի պահպանման եղանակները և միջոցները ընտրված են, 3) ստացված մթերքի նախնական մշակումն ու պահպանումը կազմակերպված է, 4) հսկված է պահպանման ընթացքում անասնաբուծական արտադրանքի որակը, 5) արտադրանքը նախապատրաստված է փոխադրման համար 6) պլանավորված է արտադրանքի արտադրման հիմնական ցուցանիշները և մատուցված է մասնագիտական ծառայություններ, 7) աշխատակիցների աշխատանքը կազմակերպված է, աշխատանքային գրաֆիկները կազմված են, 8) աշխատակիցների աշխատանքը հսկվում է, աշխատանքային վեճերը հարթեցված են, 9) կաթնատվության, քաշի և կենդանական ծագման այլ մթերքների ավելացման ուղղությամբ միջոցառումները կատարված են:
Խնդիրների բնագավառ 2. Աշխատանքային գործընթացների և արտադրանքի որակի հսկում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • իրականացնել արտադրական տեխնոլոգիաների նկատմամբ հսկողություն՝ տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան որակի հսկում,

	<ul style="list-style-type: none"> • սահմանել աշխատատեղերի, պահեստների, սառնարանների սանիտարական վիճակի հսկողություն, • իրականացնել աշխատանքի անվտանգության, հիգիենայի, հակահրդեհային անվտանգության նորմերի պահպանման հսկողություն:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) իրականացված է արտադրական տեխնոլոգիական փաստաթղթերին համապատասխան որակի հսկում, 2) սահմանված է աշխատատեղերի, պահեստների, սառնարանների սանիտարական վիճակի հսկողություն, 3) իրականացված է աշխատանքի անվտանգության, հիգիենայի, նորմերի պահպանման հսկողություն, 4) իրականացված է հակահրդեհային անվտանգության հսկողություն:
Խնդիրների բնագավառ 3. Գյուղատնտեսական կենդանիների խնամք, կերակրում և վերարտադրություն	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • ընտրել և պահպանել կենդանիների խնամքի ռեժիմներն ու կազմել կերաբաժիններ, • արդյունավետ օգտագործել կերերը, խոտհարքերը, արոտավայրերը և այլ կերահանդակները, • անցկացնել միջոցառումներ հոտի (նախրի, երամի) վերարտադրության ուղղությամբ, • ընտրել բուծվող կենդանիների տեսակը, ցեղը, կատարել ընտրություն և զույգընտրություն, • ցուցաբերել գյուղատնտեսական կենդանիներին առաջին բուժօգնություն, • իրականացնել կենդանիների լիաժեք կերակրում, գնահատել կերերի որակը և սննդային աժեքը, • կազմակերպել կերերի ճիշտ պահպանումը:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կենդանիների խնամքի ռեժիմները ճիշտ է ընտրված և պահպանված, 2) կազմված են կերաբաժինները, 3) կերերը, խոտհարքերը, արոտավայրերը և այլ կերահանդակները, օգտագործվում են արդյունավետ, 4) անցկացված են միջոցառումներ հոտի (նախրի, երամի) վերարտադրության ուղղությամբ, 5) կենդանիների տեսակը, ցեղը ճիշտ է ընտրված, 6) կատարված է ընտրություն և զույգընտրություն, 7) ցուցաբերված է գյուղատնտեսական կենդանիներին առաջին բուժօգնություն, 8) կերերի պահպանումը կազմակերպված է ճիշտ :
Խնդիրների բնագավառ 4. Տնտեսական վերլուծություն և հաշվետվություններ	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • կատարել անասնաբուժական մթերքների արտադրության տնտեսական վերլուծություն և գնահատում,

	<ul style="list-style-type: none"> • ընտրել ու կիրառել արտադրանքի արտադրման տնտեսապես շահավետ տեխնոլոգիաներ, • ներկայացնել հաշվետվություններ ըստ անասնաբուծությունում ընդունված հաշվառման հաստատված փաստաթղթերի:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) անասնաբուծական մթերքների արտադրության տնտեսական վերլուծությունը և գնահատումը կատարված է, 2) արտադրանքի արտադրման տնտեսապես շահավետ տեխնոլոգիաները ընտրված ու կիրառված են, 3) հաշվետվություններ ըստ անասնաբուծությունում ընդունված հաշվառման հաստատված փաստաթղթերի կազմված են:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<ul style="list-style-type: none"> • ստանդարտ և ոչ ստանդարտ պայմաններում կայացնել որոշումներ և պատասխանատվություն կրել ընդունած որոշումների հանդեպ, • պատասխանատվություն կրել իր ղեկավարությամբ աշխատողների աշխատանքի, հանձնարարությունների կատարման արդյունքների համար, • պատասխանատվություն կրել իրեն վստահված արտադրական միջոցների համար, աշխատանքի անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային պաշտպանության համար:
IV. Լեզուները	<p>հայերեն-լավ</p> <p>երկու օտար լեզու- բավարար (որակավորման պահանջներին համապատասխան)</p>
V. Համակարգիչը	<p>MS Word-բավարար</p> <p>MS Excel-բավարար</p> <p>MS Power Point-բավարար</p> <p>Internet Explorer-բավարար</p>
VI. Գիտելիքները	<p>Տեխնիկ անասնաբուծը պետք է իմանա.</p> <ul style="list-style-type: none"> • մասնագիտական գործունեության ոլորտում գործող հիմնական նորմատիվ իրավական ակտերը և տերմինաբանությունը, • տարբեր տեսակի գյուղատնտեսական կենդանիների կենսաբանական առանձնահատկությունները, դրանց խնամքի ու լիարժեք կերակրման հիմունքները, • անասնաբուծության բնագավառի հայրենական և արտասահմանյան առաջադիմական փորձը, • մատղաշի պահվածքի և աճեցման առանձնահատկությունները, • կենդանիների բուժվող ցեղերի բնութագիրը, նրանց կենսաբանական առանձնահատկությունները, • կենդանիների բուժման եղանակները, անասնաբուծության մեջ կիրառվող կենսատեխնոլոգիական ժամանակակից մեթոդները, գյուղատնտեսական արտադրանքի արտադրման ժամանակակից տեխնոլոգիաները,

	<ul style="list-style-type: none"> • անասնաբուժական արտադրությանը ներկայացվող զոոհիգիենիկ նորմերը, • անասնաբուժական (թռչնաբուժական) արտադրանքին վերաբերող գործող նորմատիվները, • կենդանիների հիմնական հիվանդությունները և դրանց կանխարգելման եղանակները, • անասնապահության մեջ համակարգիչների կիրառման հնարավորությունները և դրանց շահագործման կանոնները, • կենդանիների առաջնային զոոտեխնիկական հաշվառում և համարակալում, • անասնաբուժական արտադրության կազմակերպման ու կառավարման հիմունքները, • աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահիդրեհային պաշտպանության կանոններն ու նորմերը, • բնական պաշարների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պաշտպանության եղանակները:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Տեխնիկ անասնաբույժը պետք է կարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • կատարել աշխատանքներ կենդանիների մթերատվության բարձրացման, վերարտադրության լավացման ուղղությամբ, • կազմակերպել կերերի, արոտավայրերի և այլ կերային հանդավայրերի արդյունավետ օգտագործումը, • ապահովել ֆերմաներում կենդանիների խնամքի և կերակրման առաջադեմ եղանակների ներդրումը և անասնազվխաքանակի հանդեպ խնամքը, • անցկացնել կենդանիների առաջնային զոոտեխնիկական հաշվառում, • կատարել կենդանիների համարակալում, • կատարել կենդանիների ֆիքսում, • հսկել անասնաշենքի միկրոկլիման պահպանելով զոոհիգիենիկ նորմերը, • ապահովել սարքավորումների և շինությունների արդյունավետ օգտագործումը, • կազմակերպել ստուգիչ կիթերի, կենդանիների կշռման գործընթացների կատարումը, • կազմել հոտի (նախրի, երամի) շարժը, • վարել անասնաբուժական փաստաթղթերը, կազմակերպել հաշվառում, • իրականացնել արտադրվող արտադրանքի որակի հսկում՝ պետական նորմերին համապատասխան, • հաշվարկել անասնաբուժության ճյուղի, արտադրամասի գործունեության հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները, գնահատել արտադրական գործունեության շահավետությունը, • վարել ձեռնարկատիրական գործունեություն, վերլուծել և գնահատել անվտանգության տեխնիկայի վիճակը և կատարել շրջակա միջավայրի

	<p>պաշտպանության օրենսդրության պահանջները,</p> <ul style="list-style-type: none"> • ցուցաբերել գյուղատնտեսական կենդանիներին առաջին բուժօգնություն, • կազմակերպել կենդանական ծագման մթերքի պահպանումը և տեղափոխումը, • նախապատրաստել կենդանիների տեղափոխման համար և իրականացնել անկորուստ տեղափոխություն, • իրականացնել աշխատանքների կատարման արդյունքների ստուգում և աշխատանքների կատարման ընթացքի գնահատում, • լուծել առաջացած խնդիրները, գնահատել ռիսկերը և ոչ ստանդարտ իրավիճակներում կայացնել որոշումներ, • օգտագործել տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաներ՝ մասնագիտական գործունեության կատարելագործման համար, • մասնագիտական գործունեության մեջ կատարել տեխնոլոգիաների փոփոխություն, • մասնակցել արտադրանքի արտադրման գործընթացների և ծառայությունների մատուցման բարելավման միջոցառումների մշակմանը, • պահպանել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարիայի և հակահիդեհային պաշտպանության կանոններն ու նորմերը:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p>Պետք է ունենա աշխատասիրություն, նվիրվածություն, կարգապահություն, ազնվություն, պատասխանատվություն, ինքնապահանջկոտություն, ստեղծագործական կատարելագործման և նորարարության ձգտում, կոլեգիալ հարաբերությունների ճկունություն: Լինի մտածող, պարկեշտ, անկաշկանդ, հաղորդակցվող, մաքրասեր, հարգալից, նորարար, ընկերասեր:</p>